ԳԱԳԻԿ ԱՂԱՍՈՒ ԺԱՄՀԱՐՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 22.12.1980
Ծննդավայր՝ ՀՀ, քաղաք Վանաձոր

Պատմական գիտությունների թեկնածու, **Գագիկ Աղասու Ժամհարյանը** Վանաձորում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1997 թվականին, ընդունվել է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետ, որն ավարտել է գերազանցությամբ 2002 թվականին։

2009–2014 թվականներին եղել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ։

2014 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հայաստանի կոմկուսի ներկուսակցական կյանքը առօրեականության համատեքստում (1920-1930-ական թվականներ)» թեմայով (գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կ .Հ. Խաչատրյան)։

2015 թվականին ստացել է պատմական գիտությունների թեկնածուի կոչում։

2016 թվականից աշխատում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում՝ գիտաշխատողի պաշտոնում։

2016 թվականից մինչ օրս գիտական աշխատանքը համատեղում է մանկավարժական ու դասախոսական աշխատանքի հետ։

2004-2006 թվականներին աշխատել է Վանաձորի մարշալ Հ. Բաղրամյանի անվան № 26 միջնակարգ դպրոցում որպես պատմության և հասարակագիտության ուսուցիչ։

2019-2020 թվականներին դասախոսել է Վանաձորի պետական համալսարանում։

2006 թվականից մինչ օրս աշխատում է ՎՊՀ Զորիկ Գևորգյանի անվան հենակետային վարժարանում որպես պատմության և հասարակագիտության ուսուցիչ։

Մանկավարժական աշխատանքի ընթացքում մասնակցել է բազմաթիվ վերապատրաստումների, արժանացել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից շնորհակալագրերի։ 2025 թվականին ստացել է հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի 4-րդ տարակարգ։

Գիտական հետաքրքրությունները ներառում են սոցիալական պատմության, առօրեականության պատմության տեսական և Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության պատմագրության և աղբյուրագիտության հիմնահարցերը:

Հեղինակ է 1 մենագրության, ավելի քան 20 գիտական հոդվածների՝ տպագրված հանրապետական և արտասահմանյան հեղինակավոր, այդ թվում՝ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (ՄԳՇ) ընդգրկված ամսագրերում:

Գիտական զեկուցումներով, դասախոսություններով ու ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի քանի գիտաժողովներում, միջնակարգ և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում: Մասնակցել է նաև Հայաստանում առօրեականության պատմության հետազոտություններին նվիրված մի շարք պոդքաստերի և հաղորդումների:

Արժանացել է՝

- Լոռու մարզպետի շնորհակալագրին՝ 2020-2021 ուսումնական տարում դպրոցական առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում մրցանակակիր աշակերտ պատրաստելու համար (2021 թ.),
- ՎՊՀ ռեկտորի շնորհակալագրին՝ դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադային աշակերտներին լավագույնս պատրաստելու համար (2021 թ.),
- Լոռու մարզպետի շնորհակալագրին՝ 2021-2022 ուսումնական տարում դպրոցական առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում մրցանակակիր աշակերտ պատրաստելու համար (2022 թ.),
- Լոռու մարզպետի շնորհակալագրին՝ 2022-2023 ուսումնական տարում դպրոցական առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում մրցանակակիր աշակերտ պատրաստելու համար (2023 թ.):